



ԱԶԱՏ ԽՕՍԻՔ

ՇՄԱՐ 6 ԱՊՐԻԼ 1907. ԱԼԵԿՍԱՆԴՐԻԱ

ՄԱՐՏ ԱՄԻՈՇ

Գրեթէ ամիսէ մը ի վեր, սանկ ըսենք՝ ամբողջ մարտ ամսուան մէջ, «Ազատ Խօսք» չերեցաւ հրատարակին վրայ և ասիկա ճիշտ այն միջոցին ուր իր առաջին շրջանը աւարտելու երկու քայլ միայն մնացած էր: Ի՞նչ էր մեր առժամեայ և մասնակի խաւարումին պատճառը: Բաժնեգին չվճարել յամառոյ մեր բազմաթիւ (աւա՞ղ) ընթերցողները թո՛ղ իրենց խղճմտանքի խորչերուն մէջ պրպտեն զայն եւ երբ գտնեն՝ մանտա բօսթով մեզի յուղարկին:

Եթէ մանրամասնօրէն պատմելու ըլլանք այն միամեայ ֆողգոթան ուրկէ վեր մագլցեցանք «Ազատ Խօսք»ի խաչը կռնակնիս, դժուարութեանց հազար ու մէկ մացառներուն վրայ մեր համբերութեան և իննուած կամքի արիւնը ցանհնելով, ապահովաբար այլեւս Յիսուսը վար պիտի առնէին խաչէն ու մեզ անոր տեղը դնէին,

երկու կողմերնիս ալ շարելով չվճարող բաժանորդները, իբրև «զերկուս աւագակս, մի յաջմէ նորս և մի յահեկէ», (Մատթ. Ի. 38)։

Բայց թողունք այս նիւթական ճգճիմ հարցերը և աւելի վերերը սաւառնինք, թռչնահայեաց ակնարկով մը գիտելու համար Եգիպտոսայ կեանքի մէջ պատահած կարևոր եղելութիւնները, մեր բացակայութեան միջոցին։

Արդ ի՞նչ կը տեսնենք այդ բարձ ութենէն։ Նախ՝ ահա՛ մեր Գեր-Առաջնորդ Հայրը, ո՞ր Գահիրէի առաջնորդարանի սրահը, բազմոցին վերայ ծալլապատիկ նստած, թեզպիհը ձեռքը և մարքողականի շիշք քովիկը, միշտ կը սպասէ հրաշքի մը որպէսզի Ալեքսանդրիոյ ազգոյցին տեղական խնդիրները վերջնականապէս կարգադրուին։ Կ'աղօթէ հանապազ ու պահք կը բռնէ խեղճը, « Զի այս խնդիր ոչ այլ իւրք կարգադրի այլ պահօք և աղօթիւք », գրած է իրեն Ս. Պատրիարք հայրը։

Կը տեսնենք նաև Վարդան Մամիկոնեանը որ, ինչպէս ամեն տարի, այս տարի ալ գերեզմանէն կելլէ թատրոնին մէջ իբ գերը կաաարելու, Այս տարի, Եգիպտոսի մէջ, որդի մըն ալ ծնած է իրեն փոքրիկ Մագնոսը, Մագնոսիկը եթէ կուզէք, Բեռլին՝ կամ մանաւանդ թատրոնի աղդարարագրին վրայ, կ'երևան զօրականք Հայոց, Պարսից, Գուշանաց, Թաւասպարաց և ձեռ-

բախուրացուց: Գողաց և Մոգոգաց զօրական-
ները տնձնական զբաղման պատճառաւ բացակայ
գանուած են; իսկ Մուշկան Նիւսալաուուրտ պարտք
համարած է իր ներկայութեամբ պատուել հան-
դէսը:

Վարդան Մամիկոնեան, որ համբակ թատե-
րագիրներու շնորհիւ արդէն ծաղրելի դարձած է
իւր տօնին օրը, այս անգամ, Գահիրէի հայ թեր-
թերուն գրածին նայելով, բոլորովին խաղք եղեր է:
Սրղեօք կարելի չէ՞, դո՞նէ յանուն հայրենասի-
րութեան, խնդրել մեր թատերագիրներէն որ
թողուն Վարդանի օձիքը ու քիչ մըն ալ Հայկ
Նահապետին պոչէն բռնէն ու չափպէն խեղճ
Մամիկոնեանը որ ամեն տարի շնորհակալութեան
ուղերձ մը գրէ Սուլթան Համիտին, որ անշուշտ
գեղագիտական նկատումներով, արգելած է Վար-
դանին բեմ ելլելը:

Ալեքսանդրիոյ մէջ եռուզեռում մը կերևայ
նոր երիտասարդութիւն մը, հինը մաշած ըլլա-
լով, գործի գլուխ անցած է և կ'աշխատի աճիւն-
ներէն վերակենդանացնել Տիգրան Երկաթ Մի-
ութիւնը: Իրամ կը հաւարէ, հանգէսներ կը սար-
քէ: Վսեմ: Բարթող փաշա կարևոր գումար մը
« փոխ » տուած է, 100ին 100 ետ չառնելու տո-
կոսով: Այս ալ տեսակ մը վաշխառութիւն է ան-
շուշտ ուրիշ օրինակ կրնան առնել մեր Ակնցի
սառաֆները: Ծարէ օրիորդաց խումբը, կը շա-

բունակէ իր Գաշնակցական ռէպէթութուարը հնչեցընել մ'նր ականջներուն, կարկուտ տեղայնելով Խանասորի դաշտումը և հրաւիրելով տղերքը քաջ քաջ կուտելու:

Բայց առակին ճպուռին պէս միայն երգելով չչատանար, այլ իր ապագան այ կը խորհի և այս նպատակով գեղեցիկ հանդէս մը տուաւ, մարտ ամսուն մէջ, Տիգրան Երկաթի սրահը:

Վարը, կը տեսնենք գարձեայ, Գահիրէ, Բեմի մը վրայ Ազատ» եթէ կուզէք, Լ. Լ. որ շարաթը երկու անգամ, առանց յուսահատելու « բարա տուէք մեզի որպէսզի Ազգը փրկենք» կը պոռայ: Բայց մօրուք չունի, և ոչ ալ պերս, աւա՛յ, որ խօսքը անցնի: Հիւսիւսային Ամերիկայէն, փշած պտուղ հովերք, մարտ ամսուն Լ. Լ.ի ձայնը քիչ մը աւելի խռպոտ ու հարբխտա դարձուցին, բայց սըլբազան հուրը միշտ վառ է իր ներսիքին ու սնիկա տարին տասներկու ամիս չպիտի գագրի պոռայէ «բարա տուէք մեզի որպէսզի Ազգը փրկենք»:

« Ազատ Խօսք»ի Գահիրէի մրցակիցը « Նոյ Ժամանակ » ներ կանոնաւորապէս շարունակեց լոյս չտեսնել նաև մարտ ամսուն մէջ և ասով, ու միայն ասով, կրցաւ մեզի նմանիլ, գոնէ ամսու մը չափ:

Մեր բարձրութենէն կը տեսնենք նաև երկու գրական երեկոյթներ ի Գահիրէ, նորութիւն մը

բամբակի, ծխախոտի և . . . ուղտերու այս երկրին մէջ. Առաջինը՝ Վ. Մալէգեան և երկրորդը՝ Տ. Բելէկեան երեկոյթ. Գահիրեցի ծանօթ երգիծագիր մը՝ մին մկրտած է «Գլուխներու երեկոյթ» առաջինին մէջ պարզուած գրական արտադրութեանց ակնարկելով, և միւրը՝ «Ոտքերու երեկոյթ» երկրորդին մէջ սեղի ունեցած պարերու. առատութեան համար:

Մենք, չէզոք հոգի մը վրայէն, գիտել կուտանք ձանօթ երգիծաբանին թէ կանացի ոտքեր կան որոնք շատ մը առնական գլուխներ կարծեն, ոտքեր « ոնք հազար ոտանաւորի հետ կարելի չէ փոխել:

Արմենեան ներկայացումները կը շարունակուին գահիրէի մէջ յարածուն յաջողութեամբ մը, տաղանդաւոր ամուլը, իր արուեստագէտի ճշմարիտ ձիրքերով, կը գոհացնէ ամենէն՝ գրծուարահած թատերանէրները եթէ գեւորահած թատերասէրներ կան Եգիպտոսի մէջ ուր բուն ու հիացողական ծափահարութիւններով ողջունուեցան «Վէսէլլ» խմբին «մէյտան օյինի»ները:

Չմոռնանք ըսել որ Ա. Պէնյեան և Պապայեան, Հիքսոսներու այդ արժանաւոր արուեստագէտները, աններելի թեթևամտութեամբ մը համարձակեցան նոյնիսկ Օթելլօն ներկայացնել թրքավար լեզուով...

Այդ ողորմելի մարդուկները կարծենք ասկէ

աւելի մեծ նախատինք մը չէին կրնար ընել Գահիրէի հայ հասարակութեան: Չենք գիտեր թէ ծափահարուեցա՞ն Օթելլո-Պապայեանը և Տէգտէմոնա-Ռոզալին, այդ միմօր եւ այդ քափէ շանթանի ազջիկը, իրենց գերերուն մէջ: Կը յօսանք թէ ո՛չ, գոնէ Գահիրեցիներուն թատերական ճաշակին ի յարգանս:

«Հսփու եւ հովուահին» երգեցէ՛ք սեզ օր: Ռոզալի, և գիտցէ՛ք որ կօշիկէ՛ն շատ վեր ելլելու չէ... գուլպան:

(Շոգենաւային կանոնաւոր երթիեկութիւն մը հաստատուած է Եգիպտոսի և Վառնայի միջեւ, շաբաթը երեք անգամ, արթիւթներու համար մասնաւոր զեղչ):

Մարտ ամսու միսիթարական երեոյժներուն մէջ կ'արժէ յիշատակել կատուններու սովորական գործունէութիւնը տանիքներու վրայ և Շիրակի ճրդ թիւին երևումը: Ա. Արփիարեանի խմբագրապետութեամբ լոյս տեսնող այս գրական ու ազգային հանդէսը պէտք էր ոչ վերջնականապէս հաստատուն հիման մը վրայ գրուէր, ափեկա շատ գիւրին բան մըն է Եգիպտոսի գրասէր հայութեան համար: Քիչ մը բարի կամեցողութիւն եւ քիչ մըն ալ նիւթական գոհոյութիւն բաւական են Շիրակը իր գայթ ի գայթ ու տատամտ գնացքէն փրկելու համար:

Գահիրէի Հայկական Ընդհանուր Միութիւնը, Վսեմ Պօղոս փաշա Նուպարի հովանաւորութեան տակ, որէ որ, պատճառելի հաստատութիւն մը գտնելու վրայ է: Ալեքսանդրիոյ Հայերը որ մինչեւ հիմակ տակաւին մասնակցած չէին այս Միութեան, անցած ամսու մէջ, իրենց մուտքի բաժինը վճարեցին, չորս հազար ոսկիէ աւելի գումարով մը: Հա՞րկ է ըսել որ այդ գումարին քառորդը, հազար ոսկի, Վսեմ. Բարթող փաշա ինք առանձին վճարած է: Նորին Վսեմութիւնը որ առանց խնայելու կամ սակարկելու իր դրամը կուտայ ամէն բարենպատակ գործի, զարմանալի է որ տակաւին միլիէմ մը չի տուաւ, հակառակ Լ. Լ.ի պերճախօս և յօնահատ կոչերուն, ազգը փրկելու պաշտօն ստանձնող պարօններու այդ խմբին. արդեօք վստահութիւն չունի՞ անոնց դրամ ուտելու կարողութեան վրայ: Հայկական Միութեան տուած գումարին մէկ տասներորդը բաւական պիտի ըլլար սակայն ազգը փրկելու... Գոնէ ամիսի մը չափ: Այս կէտը կ'արժէ որ վեր առնուի Ա. Բ. Գ. խմբագրականներու շարքով մը:

Հոս կը վերջացնենք մեր մարտական տեսութիւնը:



ԱՆՆՈՒՐ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Հեռեեալ բաժնեցուցիչ իրողութիւնը, ամենասառայդ ազբիւրէ, մեզի կը հաղորդուի Վերին Եգիպտոս, Ֆանժի մէջ, Egyptian Land Investmentի պատկանող հողերուն տեսուչը Մինաս Աշճեան անուն կաթողիկ հայ մը, քանի մը որ առաջ հսն գանաւող ստորագաս պաշտօնեայ մը, պր. Տիգրան Ասլանեան անուն, գիշեր ժամանակ քունէն արթնցնել կուտայ, կաֆիւնեայ ձեռքով, և անհիմն ամաստանութիւն մը ընելով վրան, ձեռքերն ու ստքերը կապել տալով, շարաշար կը ծեծէ խուպաշի ու կուփի հարուածներով, մինչև որ խեղճը արիւնլուայ գետին կիցնայ: Մեծին, իբրև պալզ հանդիսատեսներ, ներկայ կը գտնուին, բացի չորս տեղացի կաֆիրներէ, նաև երկու հայ պաշտօնեաներ, պր. Լիթին Զօրայեան եւ պր. Մանուէլ Ռչտունի: Վայրենի տեսուչը այսչափով չգոհանար, ու հըրաման կ'ընէ որ խեղճ Տիգրանը դուրսը, բաց օդին հանեն ու ցիցի մը կապեն, ու այդ կապուած գիրքին մէջ, կրկին կը շարունակէ մտրահարուածները մինչև որ Տիգրան, կիսամեռ ու անզգայ, կը մարի կապուած տեղը:

Փամբրով ցիցին կապուած մնալէ ետքը, կաֆիրները կը խղճան վրան և Մինաս Աշճեանի նէն գաղտուկ, զինքը կը քակեն ու կը տանին

ախոռի մը մէջ կը բանտարկեն, ուրկէ առտուան
դէմ խեղճ զոհը կը յաջողի փախչիլ եւ հազար
նեղութիւններէ ետքը կը վերագաղնայ Ալեքսան-
դրիա, խղճալի վիճակի մը մէջ, ուր անմիջական
բժշկական խնամքներու կենթարկուի: Կըսուի
թէ տօբթ. Գըլլճճեան և տօբթ. Թորէլլա որոնք
առաջին անգամ խնամած են զինքը, բաւական
ժանր գտած են իր վիճակը և մէկ քանի ամ-
սուան հանգիստի պէտք տեսած:

Պր. Տիգրան Ասլանեան իր դէմ գործուած
ույր անուր արարքին համար գատ բացած է թէ
պարսն Մինանօ եւ ընկ. ի եւ թէ Մինաս Աշ-
ճԼանի դէմ:

Վստահ ենք թէ եղիպտական արդարակորով
կառավարութիւնը արժանի պատիժը պիտի տայ
անարժան պաշտօնեային: Այդ Մինաս Աշճեանը
արդեօք չյիշե՞ց թէ Մէնշաուի փաշային պէս մէ-
կը բանտարկութեան դատապարտուեցաւ ֆէլլահ
մը ծեծած ըլլալուն համար:

Այս գործին մասին նոր տեղեկութիւններ
եթէ ստանանք կը հաղորդենք մեր ընթերցող-
ներուն:

ԱՄԷՆ ԲԱՆ ՊԱՏՐԱՍԻ Է ՀԱՐՍԱՆԻՔ ԵՒԷՔ

(Շար. 37րդ թիւէն)

Ո՞ր հարսանիքը պիտի հարցնէք. Օրիորդ . . .ին Տիմար...ի հարսնիքը որ տեղի պիտի ունենայ մօտերս. Զէ՛, աւա՛ղ, և ո՛չ բարէ: Այս հարսնիքը զուտ ոգեկան, հոգևորական հարսնիք մըն է, ուր դժբաղդարար ինծի պէս որկորուտ և բմպելատէր հրաւիրահախներուն համար, ծամելիք կամ կուլ տալիք ոչինչ պիտի ըլլայ. հակառակ որ հարսանիքը «Գառնուկիինն է, որ ըստ պիտի ընէր ևթէ փոխանակ փիսայ ըլլալու. հաճէր խոնորհարար փուռը եփ տրուած համադամի ձկին տակ ներկայանալ մեզի, ի մեծ բերկրութիւն բմայ մերոց:..

Բայց վերադառնանք «Գառնուկիին Հարսանեաց Հրաւերին երկարապատում, ըսել կ'ուզեմ Տիար Կ: Ուզուենեանէ պատմուած:

Աւրեմի՛

Ե՞րբ է հարսանեաց ժամանակը. թէի ժամանակը հարսանիքի մը ուր ոչ ուտել կայ ոչ խմել և ոչ ծիւղել, զմեզ միջակօրէն շահագրգռող բան մըն է, բայց այսու ամենայնիւ, - ինչպէս կ'ըսեն - ճշմարտութեան զուտ դիտական, անշահախնդիր գերը մեր վրայ պարտք կը դնէ ճշդելու այս կէտը կարելի եղածին չափ անկողմնակալ ոգւով. ուստի կ'ըսենք, Տ. Ուզունեանի բերնով՝

«Պատասխանը տասը կուսանաց առակին մէջ կը գտնենք: Հոն՝ փոռան հարսանիք եկած ատեն՝ միայն պատրաստ եղող հինգ կոյսեր ներկայացուած են: Այս հինգը անոր հետ հարսանիքը կը մտնեն: և անմիջապէս դուռը կը գոցուի, անոնց հետ ուրիշ հինգ կոյսեր ալ ճամբայ ելած էին և կը փափաքէին հարսանիք

գալ, ճիշդ փեսան եկած ժամանակ, իրենք պատրաստուած չըլլալով՝ ներս մտնելու չհասան, ուստի դուրսը մնալին Անուհետեւ անոնց ըրած ջանքերը անսպասուած եղանս :

(Փակագիծի մէջ ըսեմ որ այս ստակը անվայել ըսն մը կ'երևայ ինծի... անմիջապէս գոցուող այս զըրան շիտակը շատ ջեմ հաւնիր կար... խօսքը մէջերնիս, անասակ առակ մըն է ասիկա, որո՞վհասեմ մարդ ակամայ էր փորձուի հարցնել թէ այդ դրան ետե ինչ անցած դարձած է :

Շարունակե՛ք.

«Ճիրտջ այս ստակը շատ բացայայտօրէն կը հաստատէ թէ հարսանիքը ՔՆՆԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԷՆ վերջըն է :

Եթէ Քննական գատաստանին ինչ տեսակ բան ըլլալուն արդար մտահոգութիւնը ունիք, շատ գիւրու պիտի գտնաք իր ինչութեան ամենաճշգրիտ բացատրութիւնը սա նօթագրութեան մէջ որ հիշ էջին տակը գրուած է. «Աղտուէն սկսեալ մինչև քաւութեան օրը սղջ մնացող Աստուծոյ մնացորդ ծառաներուն գատաստանը :»

Իսկ այս նօթին ալ բացատրութիւնը կրնաք ինչքան շոյն ինքն հեղինակէն որ պատրաստ է ամէն օր, ժամը ջեմ պիտի քանիէն մինչև քանի, ճրիարար եւ մարդասիրարար, յիմարանոց երթալ փափաքողները ընդունիլ, մտիկ ընելի նայիլ ապակեղէն ծովէն վերցուած ակնոցներով :

Հիմայ որ հարսանիքին ժամանակը լաւ մը ճշտեցինք եւ որոշեցինք, գանք յաջորդ ամենակարևոր հարցման եւ հարցնենք :

Ի՞նչ է հարսանիքը:

Պատասխանը ստորև:

«Քրիստոս հարսանիքէն դուրս ելլելուն՝ կ'երևայ ճերմակ ձիու մը վրայ շատ մը թագեր, են իրեն պատմութեանն ու ազգիին վրայ գրուած սնուն մը ունէր. թագաւոր թագաւորայ և տէր տերանց:

Եւ անոր բերնէն հատու սուր մ'ը կ'ելլէր. որով ազգերը պիտի վարնէր: Եւ անոնց պիտի իշխէր երկաթէ գաւազանով մը: Եւ Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեան դիմին հնձանը ինքը պիտի կոխէր: Հետեաբար՝ չեմ գիտեր թէ պէտք եղածին չափ, ի՞նչ պէս կը հիանա՞ք կո՞ի սա «հետեաբար»-ին վրայ... որչ՛ափ պարզութեամբ ու բանականութեամբ, արամարանական ին՛չ հարկաւորութեամբ մըն է որ այս «հետեաբար»-ը կուգայ կը տեղաւորուի վերի հաստուծին և յաջորդին միջև, իրարու միացնելու, կապելու համար զանոնք, ինչպէս շղթայ մը կը կապէ միմեանց երկու վաւար կանթեր. հարսանեաց պարագային ու ժամանակին (սա մեր գիտցած ժամանակը) մէջ Քրիստոս թագաւոր եղած է: Ինք այդ պահուն այդ ևս մեղաւորներուն համար քահանայ ու բարեխօս ըլլալէ դադրած է: Երբ հարսանիքը կը լրանայ, Տէրը անկից դուրս կ'ելլէ իբրև բարկութեան պաշտօնեայ... հարսանիքը Քրիստոսի իբրև թագաւոր թագաւորութեան է: Նոր Երուսաղեմը հարսն է, Գառնուկին կիներ, (վայ քե՛զ փեսայ որ կիներ քաղաք մըն է) Յայտ. Իս 9, և հարսնիք հրաուիրուած կոչնականները երկրիս վրայ ապրող ժողովուրդներն են:

Հիմայ հասկցաք թէ ի՞նչ է հարսանիքը:

Վերջացնելէ առաջ, կը խնդրեմ թախանձանօք իմ յարգոյ ընթերցողներէս որ ձեռուրնին գլուխնուն տա-

նին տեսնելու համար թէ իր տեղն է թէ ո՞չ, այս բո-
լորին ընթերցումէն հաքը:

(Շարունակելի)

9.

ՎԵՐՁՆԲԱՌ

Եթէ դերձակ աշխատանքը գործադուլ ընեն, -ինչ-
պէս քիչ շատ ամէն արհեստուորք ընելու վրայ են
զարդիս, ի՞նչ կրնան բսել իրաւամբ՝

- Ո՛չ կարեմք:

ՊՈՆԴ

ԿՈՐՈՒՍՏԵԱՂ ԷՐ ԵՒ ԳՏԱԻ

Մեր բարեկամն ու աշխատակիցը, Կրակի քաջարի
և ծանօթ հնոցապանը, Բարսեղ Շահպազ, երկու ամիսի
չափ Հարաւային Իտալիա, Քայապրիա, Թոքանո և
Թիրոլ գրօսական պտոյտ մը ընելէ հաքը, Ապինինեանց
լեռնաչգիճային ստորոտը քերելով, վերադարձած է Ա-
լեքսանդրիա, զուարթ տրամագրութեան մը տակ:
Բարի գալուստ մեր բարեկամին:

ՓԱՍՏԱԲԱՆ

Մ . Թ է Ո Բ Ի Լ Ե Ա Ն

Կը ստանձնէ ամէն տեսակ դատեր ի թառն
Վատարաններու առջև. նմանապէս կը խմբագրէ
ամէն պայմանագրութիւններ եւ այլ դատական
պաշտօնագրեր:

Գրասենեակը կը գտնուի Մէնչիէի հրապա-
րակին վրայ, Մօնֆէրաթոյի շէնքին մէջ:

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ
ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

1906 Օգոստոս 1էն մինչև 1907 Յունվար 31

ՄՈՒՏՔ

Ղրշ. ողջ

Պատրաստի գրամ հին հաշիւէն	3277,25
Հանգանակութիւններէ գոյացած	1134
Ամսավճարներէ գոյացած	1214
Մախուած բարձ մը	30
Հին ապառիկէ գանձուած	14

Գումար

5669,25

ԵԼՔ

Ղրշ. ողջ

Փօսթի և փոխադրութեան ծախք	38,50
Հիւանդ զինուորի մը զեղի գրամ	150
«Իքս» քաղաքի բանտարկելոց	780
«Էն» քաղաքի բանտարկելոց	682,50
Վիճակահանութեան համար ձեռագործի նիւթերու ծախք	195
Տիգրան Երկաթ Միութեան սրահին մէջ հանդէսին եղած ծախք	125,50
Ապառիկ ամսավճարներէ	21
Սնտուկին մէջ պատրաստ գրամ	3676,75

Գումար

5669,25

ZINCOGRAPHIE

HENGER NAZARETHIAN
ALEXANDRIE RUE STAMBOUL

HENGER NAZARETHIAN.

RUE STAMBOUL

ZINCOGRAPHIE

“ԱՐՍ ԽՕՒՔ”-ի գրքակցները

ԱՐՍ ԽՕՒՔ - ԿԵ ՉՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՄԲԱՑ ՕՐԿԵ

Ներկայիս համար թածկելիք է

40 ԲԻՆԵ	40 ԳՐԵ ՈՂՁ
20 ..	20 ..

ԱՐՏԱՐԱՆԻՍ

ԵՆՔԱՍ	40 ԲԻՆ	10 ՏՐԵՐ
ԲԱՐՍԱ	..	4 ԲԱՐԱԼԻ
ՍՄԵՐԿԱ	..	2 ՅԱԼԱՐ

Թածանորդարձրի եր կանխիկ

ՀԱՍՏ 4 ԳՐԵ ՈՂՁ

“ԱՐՍ ԽՕՒՔ”-ի համար թածկելիք կամ
որ է է գրքակցին պետք է ապրի ԵՆ-
տեղայ հարցերին”

H. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE - EGYPTE

Մեկնողներին կրկնական Թածանորդ
արժեքներով

Կիսանորդարձրույթ խմբակեր Ե. ՍՏԵՂԻ

Ինքը. Գրքերի Կ. ՍՏԵՂԻ Կ. ՍՏԵՂԻ Ալեքսանդրիա